ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/83

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Սողոյանի, Ա. Ավանեսյանի, Դ. Մարտիրոսյանի,
ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի ներկայացուցիչ՝ Ա. Գևորգյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով բաց մրցույթ, առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4635-2021 գրությամբ «Կոնցեռն

Էներգոմաշ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 19.03.2021թ. թիվ 01/61-6034 գրության հիման վրա, 30.03.2021թ.-ին «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 30.03.2021թ.-ին:

30.03.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/83 համարի ծածկագիրը:

08.04.2021թ.-ին, 27.04.2021թ.-ին և 29.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 27.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.04.2021թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 19.03.2021թ. թիվ 01/61-6034 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում մասնակցության հայտ են ներկայացրել «Մեդտեխսերվիս» ՍՊ, «Տ-Մեդ» ՓԲ և «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲ ընկերությունները:

Վերը նշված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով և Հրավերի ՄԱՍ I 8.10 կետով, «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի կողմից 5-րդ չափաբաժնի մասով, «Տ-Մեդ» ՓԲԸ-ի կողմից 4-րդ չաւիաբաժնի մասով և «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 4-րդ չաւիաբաժնի մասով ներկայացրած հայտերը գնահատել է անբավարար և մերժել:

Վերոգրյալով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի {այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, առաջարկում եմ վերը նշված ընկերությունների նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 31.03.2021թ.-ին գրությամբ դիմել է «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4635-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում, Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 30/03/2021թ. ՍՑ-Լ0-2021/83 ծածկագրով նախաձեռնած ընթացակարգի, Ձեզ ենք ներկայացնում «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ-ի գրավոր դիրքորոշումը:

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16 մարտի 2021թ.-ին հրապարակված թիվ 13 արձանագրության 1.1 կետի 2-րդ մասի 3-րդ

պարբերության, նույն արձանագրության 1.2 կետի՝ վերոնշյալ հանձնաժողովը որոշել է մերժել «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպան կարգի 42-րդ կետով և հրավերի ՄԱՍ I 8.10 կետով:

Վերլուծելով մերժման հիմքերը, գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի որոշումը անհիմն է, քանի որ, բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ չի ուսումնասիրել և գնահատել «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած՝ բողոքի առակա հանդիսացող 4-րդ չափաբաժնի (ռենտգեն ապարատ) տեխնիկական բնութագիրը, ավելին՝ հրավերով պահաջված տեխնիկական բնութագրերը կազմել է մի շարք խախտումներով, սխալներով, և արդյունքում իրականացրել «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրի ոչ պատշաճ գնահատում:

Անդրադառնալով սույն բողոքի առարկա հանդիսացող 4-րդ չափաբաժնին (ռենտգեն ապարատ) Պատվիրատուն պահանջել է շտկում, սակայն արդյունքում արձանագրել է անհամապատասխան և մերժել:

Ստորև Ձեզ ենք ներկայացնում հրավերի պահանջը և մեր առաջարկը՝ 4-րդ չափաբաժնի (ռենտգեն ապարատ) մասով, նշելով ի սկզբանե հրավերի տեխնիկական բնութագրում առկա խախտումները, և մեր՝ շտկման մասով մեկնաբանությունները:

Խախտում No 1

Մրցույթի պահանջ	*Առաջարկված տարբերակ*
Խողովակի ուղահայաց շարժման տիրույթը՝ 1200մմ± 5%՝	*Խողովակի ուղահայաց շարժման տիրույթը՝ 1 330մմ, որը ամբողջությամբ համարժեք է 1200մմ շարժմանը (հետազոտման սենյակի փոքր լինելու դեպքում համակարգի բաղադրիչների տեղաշարժի տիրույթը ամբողջությամբ կարգավրվում է ծրագրային ապահովմամբ),*

Նշենք, որ Պատվիրատուի կողմից մերժվել է նշված կետով պահանջին ներկայացվածը՝ «Խողովակի ուղահայաց շարժման տիրույթը՝ 1330մմ», որպես բացատրություն նշենք, որ տվյալ դեպքում ներկայացվել է ավելի ճկուն խողովակի ուղղահայաց շարժման տիրույթ, որը ծածկում է և՝ նշված պահանջը, և՝ ավելի հարմարավետ է դարձնում պացիենտի դիրքավորումը հետազոտության ընթացքում:

Միակ դեպքը, երբ հնարավոր է տվյալ տիրույթը սահմանափակել պահանջով, այսինքն, ոչ ավել քան 1260մմ, դա սենյակի փոքր չափերն են: Մեր ընկերության կողմից հաշվի է առնվել նույնիսկ այդ տարբերակը, այն է՝ առաջարկած համակարգի խողովակի ուղահայաց շարժման տիրույթը կարգավորվում է ըստ սենյակի չափերի և կարող է սահմանափակվել հենց 1200մմ:

Հիմք ընդունելով վերը նշված մասնագիտական բացատրությունը, փաստում ենք, որ Պատվիրատուն ոչ լիարժեք է դիտարկել և գնահատել մասնակցի կողմից ներկայացված

Խողովակի ուղղահայաց շարժման փիրույթի համարժեքությունը, արդյունքում մասնակցի կողմից ներկայացվածը գնահատելով անհամապատասխան և մերժման ենթակա:

Խախտում No 2

Մրցույթի պահանջ	*Առաջարկված տարբերակ*
Սյունի երկայանական շարժման փիրույթը՝ 1700մմ± 5%՝	*Սյունի երկայնական շարժման փիրույթը՝ 2100մմ, որը ամբողջությամբ համարժեք է 1700մմ շարժմանը (հետազոտման սենյակի փոքր լինելու դեպքում համակարգի բաղադրիչների տեղաշարժի փիրույթը ամբողջությամբ կարգավորվում է)*

Պատվիրատուի կողմից մերժվել է տվյալ կետով պահանջին ներկայացված «Սյունի երկայնական շարժման փիրույթը՝ 2100մմ», որպես բացատրություն նշենք, որ տվյալ դեպքում ներկայացվել է ավելի ճկուն սյունի երկայնական շարժման փիրույթ, որը ծածկում է և՝ նշված պահանջը, և՝ ավելի հարմարավետ է դարձնում պացիենտի դիրքավորումը հետազոտության ընթացքում:

Միակ դեպքը, երբ հնարավոր է տվյալ փիրույթը սահմանափակել պահանջով, այսինքն, ոչ ավել քան 1785մմ, դա սենյակի փոքր չափերն են: Մեր ընկերության կողմից հաշվի է առնվել նույնիսկ այդ տարբերակը, այն է՝ սյունի երկայանական շարժման փիրույթը կարգավորվում է ըստ սենյակի չափերի և չի շարժվում ավելի, քան 1700մմ:

Հիմք ընդունելով վերը նշված մասնագիտական բացատրությունը, փաստում ենք, որ Պատվիրատուն ոչ լիարժեք է դիտարկել և գնահատել մասնակցի կողմից ներկայացված Սյունի երկայնական շարժման փիրույթի համարժեքությունը, արդյունքում մասնակցի կողմից ներկայացվածը գնահատելով անհամապատասխան և մերժման ենթակա:

Խախտում No 3

Մրցույթի պահանջ	*Առաջարկված տարբերակ*
Ցանցի խտությունը՝ ≥40 լ / սմ	*Ցանցի խտությունը՝ 103 զգ/սմ , որը ավելին է կոնտրաստային թողունակությամբ քան 40 լ/սմ, ինչպես և պահանջվում է մրցույթով*

Պատվիրատուի կողմից մերժվել է տվյալ կետով պահանջին ներկայացված «Ցանցի խտությունը՝ 103 զգ/սմ»:

Պահանջում ներկայացված ≥ 40 լ/սմ» միավոր ընդհանրապես գոյություն չունի և անհասկանալի է թե ինչ շտկման մասին է խոսքը գնում:

Սակայն ենթադրելով, որ Պատվիրատուն ռաստրի կոնտրաստային թողունակության միավորը ռուսերենից թարգմանել է սխալ (линии на сантиметр или пара линий на сантиметр/дюйм, հայերեն՝ գ/սմ կամ զգ/սմ), մենք առաջարկել ենք շատ ավելի բարձր թողունակությամբ ցանց, ինչը և պահանջվում էր մրցույթով, որը սակայն մերժվել է:

Խախտում No 4

Մրցույթի պահանջ	*Առաջարկված տարբերակ*
Ֆոկուսի հեռավորությունը՝ 130սմ± 5%	*Ֆոկուսի հեռավորությունը՝ 150սմ կարգավորվող նաև 130սմ, որը համարժեք է 130սմ,*

Պատվիրատուի կողմից մերժվել է տվյալ կետով պահանջին ներկայացված «Ֆոկուսի հեռավորությունը՝ 150սմ»:

Մեր ընկերության կողմից առաջարկվել է շատ ավելի լավ ֆոկուսային հեռավորությամբ համակարգ, ինչը չափազանց մեծ առավելություն է ռենտգեն համակարգի համար՝ որպես օրինակ կրծքավանդակի հետազոտության ժամանակ ֆոկուսային հեռավորությունը չպետք է լինի պակաս, քան 150սմ:

Սակայն հաշվի առնելով պահանջը, մեր կողմից առաջարկվել է ֆոկուսի հեռավորությունը ամբողջությամբ կարգավորվող տարբերակ, այսինքն համարժեք 130սմ, ինչը մերժվել է Պատվիրատուի կողմից:

Խախտում No 5

Մրցույթի պահանջ	Առաջարկված տարբերակ
Տարողությունը ≥ 200կգ± 10%՝	Տարողությունը՝ 300կգ, որը ավելի քան բավարարում է մրցույթի պահանջներին ≥ 200կգ»,

Պատվիրատուի կողմից մերժվել է տվյալ կետով պահանջին ներկայացված «Տարողությունը՝ 300կգ»-ը:

Մեր ընկերության կողմից առաջարկվել է շատ ավելի լավ տարողությամբ համակարգ:

Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջում միաժամանակ նշված «ոչ պակաս քան» և «±5%» հակասում են միմյանց և իմաստազուրկ են:

Մեր կողմից առաջարկված տարբերակում կարող է հետազոտվել ինչպես 200կգ, 250գ այնպես էլ մինչև 300կգ քաշով պացիենտը, ինչը անհասկանալիորեն մերժվել է Պատվիրատուի կողմից:

Խախտում No 6

Մրցույթի պահանջ	Առաջարկված տարբերակ
Չափը՝ 2100մմx820մմ ± 10%	Չափը՝ 2200մմx7500մմ, որը համարժեք է պահանջված 2100x820մմ ± 10%,

Պատվիրատուի կողմից մերժվել է տվյալ կետով պահանջին ներկայացված «Չափը՝ 2200մմx7500մմ»:

Այստեղ խոսքը վերաբերում է հետազոտման սեղանի մասին:

Մեր ընկերության կողմից առաջարկվել է 2200մմx7500մմ չափերով սեղան, ինչն ամբողջությամբ համապատասխանում է 2100մմx820մմ ± 10% պահանջին, սակայն անհասկանալիորեն մերժվել է Պատվիրատուի կողմից:

Խախտում No 7

Մրցույթի պահանջ	Առաջարկված տարբերակ
Հորիզոնական շարժումը՝ 900մմ± 5%	Հորիզոնական շարժումը՝ 1000մմ կարգավորվող, որը համարժեք է 900մմ,

Պատվիրատուի կողմից մերժվել է տվյալ կետով պահանջին ներկայացված «Հորիզոնական շարժումը՝ 1000մմ», որպես բացատրություն նշենք, որ փփալ դեպքում

ներկայացվել է ավելի ճկուն սեղանի հորիզոնական շարժում, քան պահանջվում է, որը ծածկում է և՝ նշված պահանջը, և՝ ավելի հարմարավետ է դարձնում պացիենտի դիրքավորումը հետազոտության ընթացքում:

Սակայն հաշվի առնելով պահանջը, մեր ընկերության կողմից առաջարկվել է հորիզոնական շարժումը ամբողջությամբ կարգավորվող տարբերակ, այսինքն համարժեք 900մմ, ինչը մերժվել է Պատվիրատուի կողմից:

Խախտում No 8-4-րդ չափաբաժնի մասով՝

Մրցույթի պահանջ	*Առաջարկված տարբերակ*
Յանցի խտությունը՝ ≥40 լ / սմ	*Ցանցի խտությունը՝ 103 զգ/սմ , որը ավելին է կոնտրաստային թողունակությամբ քան 40 լ/սմ, ինչպես և պահանջվում է մրցույթով*

Պատվիրատուի կողմից մերժվել է տվյալ կետով պահանջին ներկայացված «Յանցի խտությունը՝ 103 զգ/սմ»:

Պահանջում ներկայացված «≥40 լ/սմ» միավոր ընդհանրապես գոյություն չունի և անհասկանալի է թե ինչ շտկման մասին է խոսքը գնում:

Սակայն ենթադրելով, որ Պատվիրատուն ռաստրի կոնտրաստային թողունակության միավորը ռուսերենից թարգմանել է սխալ (линии на сантиметр или пара линий на сантиметр/дюйм, հայերեն՝ գ/սմ կամ զգ/սմ), մենք առաջարկել ենք շատ ավելի բարձր թողունակությամբ ցանց, ինչը և պահանջվում էր մրցույթով, որը սակայն մերժվել է:

Ավելին, գնման առարկան լինելով Առողջապահական կազմակերպությունների կարիքի համար, Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի կողմից տեխնիկական բնութագրերի պահանջները պետք է ձևակերպվեին հստակ, ճշգրիտ, գնահատումը կատարվեր պատշաճ, բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացման, հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը:

Ի լրումն նշենք, որ Պատվիրատուն շտկում էր պահանջել ոչ միայն 4-րդ չափաբաժնի մասով, այլ նաև 1-ին, 2-րդ և 3-րդ:

Ձեր ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել այն փաստին, որ անկախ Պատվիրատուի կողմից թույլ տրված մի շարք խախտումների, անհասկանալի է դառնում Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի կողմից 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով «շտկման» ընդունումը, իսկ 4-րդ չափաբաժնով՝ մերժումը, որը իմաստային առումով չի տարբերվում 1-3 չափաբաժիններում ընդունված համարվող կետերից /սույն պարբերության մասով անդրադարձել ենք մեր 31/03/2021 թ -ին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացրած բողոքում/:

Ելնելով վերոգրյալից, գտնում ենք, որ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն ներկայացրել է ավելի հզոր չափորոշիչներով տեխնիկական առաջարկ, ինչը ոչ պատշաճ գնահատմամբ մերժվել է, արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից կայացվել է ոչ իրավաչափ որոշում:

Ուստի, վերոնշյալ փաստերով բացակայում են գնահատող հանձնաժողովի 11 մարտի 2021թ-ի թիվ 12 արձանագրության մեջ նշված անհամապատասխանությունները, և անհիմն է 16 մարտի 2021թ. թիվ 13 արձանագրության մերժման որոշումը:

Ղեկավարվելով Գնումների մասին օրենքով, մասնակցի իրավունքն է պաշտպանելու և վերականգնելու իր խախտված իրավունքները, քանի որ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի պահանջը իրավաչափ է, բխում է օրենքի պահանջներից:»:

4. <u>ՍՑ-LO-2021/83 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի կողմից առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով 18.12.2020թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 4-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է ձեռքբերել հետևյալ ապրանքը. ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Բարձր հաճախականությամբ գեներատոր»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Հզորությունը – 50 ԿՎտ: Խողովակի լարման միջակայքը – 40-150Կվ± 5%: Խողովակի առավելագույն լարումը – 10-630մԱ± 5%: Ժամանակային միջակայք – 1մվ-10վ: Ընթացիկ ժամանակի միջակայք 0.2մԱս∼800մԱս: Ելքային հաճախականություն ≥ 200կհց± 5%: Հարթ պանելային դետեկտոր: Տեսակը՝ շարժական: Պատրաստված՝ Ամորֆ սիլիցիում և ցեզիումի յոդիդ: Դետեկտորի չափը՝ 17” x 17”: Պիքսելային մատրիցա՝ 3072 × 3072: Էֆեկտիվ պիքսելների քանակը՝ 9,4 միլլիոն± 10%: Պիքսելի չափը՝ 139μm± 5%: Տարածական լուծում՝ 3.6 LP / mm: A/D փոխարկման նիշը՝ 16 բիթս: Ցուցադրման*

ժամանակահատվածը՝ ≤ 3վ: Ռենտգեն Խողովակ: Պտտվող անոդային ջերմային հզորություն ≥300 KHU± 5%: Կիզակետային կետի չափը՝ 0.6 / 1.2mm: Ֆոկուզի հզորությունը՝ մեծ 77Կվտ; փոքր: 32Կվտ: Ռենտգեն Խողովակի կանգնակ: Խողովակի շուրջ հորիզոնական պտտման առանցքի անկյունը՝ ոչ պակաս ± 180 °: Սյունի ուղահայաց առանցքի շուրջ պտտման ահկյունը՝ ոչ պակաս ± 180 °: Խողովակի ուղահայաց շարժման տիրույթը՝ 1200մմ± 5%: Սյունի երկայանական շարժման տիրույթը՝ 1700մմ± 5%: Գլխիկը, որտեղ տեղակայված է ռենտգեն խեղեվակը ունի մեծ, գունավոր հպումային 8'' էկրան, որը իրական ժամանակի ռեժիմով կապված է կառավարման վահանակի հետ ապահովելով պարամետրերի ընտրման և տեղորոշման առավել արդյունավետ հնարավորություն: Ռենգենային նկարի կանգնակ: Ուղահայաց շարժումը՝ 1400մմ± 5%: Ցանցի չափը՝ ոչ պակաս քան 450x450 մմ± 5%: Ցանցի կոյֆիցենտը՝ ≥10: 1: Ցանցի խտությունը՝ ≥40 լ / սմ : Ֆոկուսի հեռավորությունը՝ 130սմ± 5%: Հիվանդի սեղան: Տեսակը՝ շարժական: Տարողությունը՝ ≥ 200կգ± 10%: Բարձրությունը՝ 680մմ ± 5%: Չափը՝ 2100մմx820մմ ± 10%: Երկայանական շարժումը՝ 250մմ± 5%: Հորիզոնական շարժումը՝ 900մմ± 5%: Դետեկտորի պնակի շարժումը՝ 500մմ± 5%: Ցանցի չափը՝ ոչ պակաս քան 450x450 մմ± 5%: Ցանցի կոյֆիցենտը՝ ≥10: 1: Ցանցի խտությունը՝ ≥40 լ / սմ: Աշխատանքային կայան: Ծրագրային ապահովում՝ գրանցում, հիվանդների կառավարում, ստուգումների կառավարում, նկարների մշակում, նկարների պատկերման համակարգ, պատկերների տպագրություն, տպագրության հաշվետվություն: DICOM 3.0 ներառում է DICOM աշխատանքային ցանկ, DICOM պահպանում SCU, DICOM պահպանում SCP: Սխեմատիկ տեղորոշման /positioning/ ցուցիչ: Բարձր լարման գեներատորի և հարթ պանել դետեկտորի կապի վերահսկում: Ամբուլատոր, արտակարգ ռեժիմ: Պատկերի մշակման advanced ֆունկցիա . Գամմայի ճշգրտում; մուլտի-LUT կորի կարգաբերում, աղմուկի նվազեցում, պատկերի բարելավում և այլն: Համակարգի դիագնոստիկա և համակարգի կարգավիճակի իրական ժամանակում արձանագրում: Ներառում է մոնիտոր 22" ± 5%, համակարգիչ, ռենտգեն պաշտպանիչ ապակի 120x80սմ: Սերտիֆիկատներ՝ ISO 9001 կամ ISO 13485»:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել նաև «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն:

iv. «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտնել է, որ հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ, ինչպես նաև

հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.03.2021թ.-ի նիստի թիվ 12 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի գնահատման արդյունքում, բացի այլ չափաբաժիններից, 4-րդ չափաբաժնի մասով հրավերի պահանջների նկատմամբ արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները.

Չափաբաժին և անվանում	**հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող պայման**	**մասնակիցների կողմից տեխնիկական բնութագրով առաջարկվող պայման**	**Չափաբաժին և անվանում**
«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ	4-րդ չափաբաժին Ռենտգեն ապարատ	1. Խողովակի ուղահայաց շարժման տիրույթը՝ 1200մմ± 5%՝-1330մմ 2. Սյունի երկայնական շարժման տիրույթը՝ 1700մմ± 5%՝-2100մմ 3. Ցանցի խտությունը՝ ≤40 լ / սմ - 103 զգ/սմ 4. Ֆոկուսի հեռավորությունը՝ 130սմ± 5%՝ - 150սմ 5. Տարողությունը՝ ≤ 200կգ± 10%՝ 6. Չափը՝ 2100մմx820մմ + 10%՝ 7. Հորիզոնական շարժումը՝ 900մմ+ 5%՝ 8. Ցանցի խտությունը՝ ≤40 լ / սմ	1. Խողովակի ուղահայաց շարժման տիրույթը՝ 1330մմ 2. Սյունի երկայանական 2100մմ 3.Ցանցի խտությունը՝ 103 զգ/սմ 4.Ֆոկոսի հեռավորությունը՝ - 150սմ 5.Տարողությունը՝կգ 300 6.Չափը՝ 2200մմx7500մմ՝ 7.Հորիզոնական շարժումը՝ 1000մմ 8.Ցանցի խտությունը՝ 103զզ/սմ

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 11.03.2021թ.-ին Մասնակցի էլ. հասցեին է ուղարկել Հանձնաժողովի 11.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 12 արձանագրությունը:

viii. Հանձնաժողովի 15.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 13 արձանագրության համաձայն՝ «Տ-Մեդ» ՓԲԸ-ի, «Դելտա» ՍՊԸ-ի, «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի, «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի, «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի, «Յունիմեդ» հայ-Ռուսական ՀՁ ՍՊԸ-ի, «Մեդպրո» ՍՊԸ-ի, «Ավէմեդ» ՍՊԸ-ի, «Կենդանի Լույս» ՍՊԸ-ի, «Թեոֆարմա» ՍՊԸ-ի, «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի և «ՍթերիՀոմ» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամանակին տրամադրվել են գնահատող հանձնաժողովի 11.03.2021թ.-ի թիվ 12 արձանագրության 1.2 կետով արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատաս-խանությունների վերաբերյալ փաստաթղթերը:

ix. Նույն արձնագրության 1.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով վերը նշված մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը արձանագրել է, որ՝

- «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի կողմից 5-րդ չափաբաժնի մասով արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:
- «Տ-Մեդ» ՓԲԸ-ի կողմից 4-րդ չափաբաժնի մասով արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:
- «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 4-րդ չափաբաժնի մասով արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:

x. Նույն արձնագրության 1.2 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի, «Տ-Մեդ» ՓԲԸ-ի և «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից վերը նշված չափաբաժինների մասով չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով և Հրավերի ՄԱՍ I 8.10 կետով, որոշել է նշված մասնակիցների հայտերը, նշված չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել:

xi. 09.04.2021թ.-ին Մասնակցի կողմից ներկայացված միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձը 15.04.2021թ.-ի թիվ ԲՔԱ-ԼՕ/1/5701-2021 գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը և հայտնել, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 19.03.2021թ.-ի թիվ 01/61-6034 գրության հիման վրա, 30.03.2021թ.-ին թիվ 26/26-1/4635-2021 գրությամբ «Տ-Մեդ» ՓԲ և «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր: Պատվիրատուն վերոնշյալ գրությամբ հայտնել է, որ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած Մասնակիցների հայտերը Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով գնահատվել են անբավարար և մերժվել են, քանի որ վերջիններիս կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերում արձանագրվել են անհամապատասխանություններ: Մասնակիցները միջնորդություններ են ներկայացրել Բողոքներ քննող անձին և խնդրել են հատուկ գիտելիքներ պահանջվող հարցերի պարզաբանման համար դիմել պետական իրավասու մարմնին՝ ՀՀ առողջապահության նախարարությանը:

Կարիքն առաջանալու կապակցությամբ, ելնելով ընթացակարգով բարձրացված հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակից և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանի 17-րդ կետի դրույթները, Բողոքներ քննող անձը ներկայացրել է Մասնակիցների կողմից ներկայացված միջնորդությունները և կից փաստաթղթերը, ինչպես նաև Ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ փոփոխված հրավերը, և խնդրել է հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը տալ պարզաբանում՝ միջնորդություններով բարձրացված հարցերի վերաբերյալ:

xii. ՀՀ առողջապահության նախարարությունն ի պատասխան Բողոքներ քննող անձի 15.04.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/5701-2021 գրության՝ հայտնել է, որ «Տ-Մեդ» ՓԲԸ-ի և «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրվել են ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան մասնագետների կողմից՝ կից ներկայացնելով մասնագետների եզրակացությունը (այսուհետ նաև՝ Եզրակացություն):

xiii. Եզրակացության համաձայն՝

1) «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 1-ին հարցադրումը. խողովակի ուղղահայաց շարժման տիրույթը 1200մմ ±5% պահանջը առաջարկվում է խմբագրել «ոչ պակաս քան 1200մմ»: «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է խողովակի ուղղահայաց շարժման տիրույթը 1330մմ առաջարկ, որն ավելի լավ ցուցանիշ է և լիովին համապատասխանում է տեխնիկական պահանջին: Ինչպես նշվել է «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի հարցադրման մեկնաբանության մեջ, այդ շարժումը իրականում հնարավոր է կարգավորել ծրագրային ապահովման միջոցով:

2) «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 2-րդ հարցադրումը. սյունի երկայնական շարժման տիրույթը 1700մմ ±5% պահանջը առաջարկվում է խմբագրել «ոչ պակաս քան 1700մմ»: «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է սյունի երկայնական շարժման տիրույթը 2100մմ առաջարկ, որն ավելի լավ ցուցանիշ է և լիովին համապատասխանում է տեխնիկական պահանջին: Ինչպես նշվել է «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի հարցադրման մեկնաբանության մեջ, այդ շարժումը նույնպես հնարավոր է կարգավորել:

3) «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 3-րդ հարցադրումը. ցանցի խտությունը ≥40 լ/սմ պահանջը առաջարկվում է խմբագրել «ոչ պակաս քան կամ ≥40 զգ/սմ»: «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է ցանցի խտությունը 103

զգ/սմ առաջարկ, որն ավելի լավ ցուցանիշ է և լիովին համապատասխանում է տեխնիկական պահանջին:

4) «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 4-րդ հարցադրումը. ֆոկուսի հեռավորությունը 130սմ ±5% պահանջը առաջարկվում է խմբագրել «ոչ պակաս քան 130սմ»: «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է ֆոկուսային հեռավորությունը 150սմ առաջարկ, որն ավելի լավ ցուցանիշ է և լիովին համապատասխանում է տեխնիկական պահանջին:

5) «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 5-րդ հարցադրումը. ≥ 200 կգ ±5% պահանջում առկա ≥ սիմվոլն արդեն այստեղ նշանակում է «ոչ պակաս քան», իսկ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տարողությունը 300 կգ առաջարկը լիովին համապատասխանում է տեխնիկական պահանջին:

6) «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 6-րդ հարցադրումը. չափը 2100մմx820մմ ±10% պահանջին «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է չափը 2200մմx7500մմ առաջարկ: Ուսումնասիրվել է ներկայացված մոդելի տեխնիկական ցուցանիշները համացանցում, քանի որ այդպիսի չափսերով ռենտգենյան սեղան գոյություն չունի: Ներկայացված մոդելի չափսերը 2200մմx750մմ են: Ամենայն հավանականությամբ կատարվել է տպագրական սխալ (7500մմ և 750մմ): 2200մմx750մմ չափսի դեպքում տվյալ ցուցանիշը լիովին համապատասխանում է տեխնիկական պահանջին:

7) «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 7-րդ հարցադրումը. հորիզոնական շարժումը 900մմ ±5% պահանջը առաջարկվում է խմբագրել «ոչ պակաս քան 900մմ»: «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է հորիզոնական շարժումը 1000մմ առաջարկ, որն ավելի լավ ցուցանիշ է և լիովին համապատասխանում է տեխնիկական պահանջին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4635-2021 գրությամբ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Երևանի քաղաքապետարանի կողմից առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով 18.12.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների

կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների

նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապա-տասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Ըստ այդմ՝ Պատվիրատուն և Հանձնաժողովը գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանա-տվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով 18.12.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով, հայտ ներկայացրած «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի գնահատման արդյունքում, բացի այլ չափաբաժիններից, 4-րդ չափաբաժնի մասով հրավերի պահանջների նկատմամբ Հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություններ, ինչի արդյունքում Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 11.03.2021թ.-ին Մասնակցի էլ. հասցեին է ուղարկել Հանձնաժողովի 11.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 12 արձանագրությունը:

Հանձնաժողովի 15.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 13 արձանագրությամբ Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից չի շտկվել 4-րդ չափաբաժնի մասով արձանագրված անհամապատասխանությունները, ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով և Հրավերի ՄԱՍ I 8.10 կետով, որոշել է Մասնակցի հայտերը գնահատել անբավարար և մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, ուսումնասիրելով ՀՀ առողջապահության նախարարության ի պատասխան Բողոքներ քննող անձի 15.04.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/5701-2021 գրության ներկայացրած գրությունն ու դրա կից

եզրակացությունը, Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն դեպքում Մասնակցի կողմից որպես շտկում ներկայացված հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանել է Հրավերի 4-րդ չափաբաժնի համար սահմանված պահանջներին, որպիսի պայմաններում վերջինիս հայտն անբավարար գնահատելու և ապա մերժելու մասին կայացված Հանձնաժողովի որոշումն իրավաչափ չէ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալներով իրավական և փաստական հանգամանքերի հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Մասնակցի կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կհանգեցներ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթների կիրառմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու

հանգեցնել «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4635-2021 գրությամբ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/83 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**